Ծուշանիկ Կուրղինյան

Մենակ կինը

Գ. ԱՐԱՐ

Փոքրիկ անշուք կայարան: Գալիս ու գնում են մարդիկ ծանրաբեռնված էշերով: Պատի տակ, նստարանի վրա նստած են մի քանի քնճատ կանայք: Հեռվից լսվում է աքլորների կանչ և շների հաչոց. ամպոտ առավոտ է: Քամին թափում է ծառերից դեղնած տերևները: Լսելի է ծովի շաչյունը: Գալիս է նավավարը կոկ հագնված մի մաղ ու զամբյուղ ձեռին ու նստում է առանձին պատի տակ, գծին մոտիկ:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՆԱՎԱՎԱՐ. (Թախծալի հայացքով երկար շուրջը դիտելուց հետո)

Գարունն Էլ գնաց... (Ժպտում է պարզամիտ)
Գնաց, ի՞նչ կանես, ու էլ ետ չի գա:
Մրրկեց հոգուս մորմոքը քնած,
Ինձ հանգիստ չկա:
Ո՛չ գետնի վրա, ո՛չ էլ... (Կասես մեկին է պատմում)
Չէր ուզում գնալ. չի սիրում մարդկանց,
Ուզում է ապրել ծովի եզերքին,
Աղքատ ու անգանձ.
Իր երգը խառնել ալիքի երգին...

Պատվիրեց հիշեմ, երբ արփին ծագի,

Երբ վերջալույսին խաղաղ մտնի մայր .
Իսկ երբ հողմերից ծովը մրրկի,
Ես ցանցը փռեմ իր բախտի համար . . . (Շրջում է և մոտենալով գծին, երկար դիտում, շոշափում)
Մի տես, թե ինչպես ձգվել է հպարտ
Երկրի երեսին,
Որ հեշտ ապահով շրջե ամեն մարդ
Հոգսերով իր սին:
Քանի զույգ ձեռքեր այս ճամփու շենքի
Հոգնան, կոշտացան:
Հույսերն էլ մարան նրանց սև դեմքին:
Ու չկշտացան . . . (Նստում է տեղը)
Ասաց ապրեի քեզ հետ, հյուղիդ մեջ (Հուզվում է սաստիկ)
Քեզ ձուկ խաշեի, սիրեի հոր պես . . . (Ժպտում է)
Եվ այդ միշտ է այդպես,
Իր բաղձանքները հանդուգն, անվերջ:

(Կանանցից մեկը բարձր) Պապ, գիտե՞ս արդյոք . . ժամը քանիսն է:

ՆԱՎԱՎԱՐ . (Դժգոհ)

Մի նոր բան չկա, ողջը դեռ հին է:

ԿԻՆԸ . — (Հորանջելով թեքվում է պատին)

Կուզեի գիտնալ, ե՞րբ ենք մեկնելու .

ՆԱՎԱՎԱՐ . (Սրտնեղ)

Մեկնելուց առաջ սպասիր հլու՝
Կերթաս, չես մնա . . .

2-ՐԴ ԿԻՆ . — (Քնից զարթնելով)

Ո՞վ պիտի մնա . . . (Կանայք ծիծաղում են ու նորից լռում) Զանգի ձայն է լսվում: Ծերունին անհանգիստ վեր է թռչում տեղից,իրերը ձեռքին վազում դեպի գիծը, նայում աջ ու ձախ: Գալիս է Հեղինեն ճանապարհորդական վերարկու և գլխարկ հագած, մի փոքրիկ պայուսակ ձեռքին:

ՀԵՂԵՆԵ . (Ծերունուն նկատելով)

Եկե՞լ ես արդեն:

ՆԱՎԱՎԱՐ . (Ուրախ)

Եկել եմ, եկել . . .

ՀԵՂԻՆԵ . (Իրերին նայելով)

Ո՞ւր ես գնալու . . .
ՆԱՎԱՎԱՐ . (Անվստահ)
Քեզ համար է այդ . . . նվերս վերջին . . .

ՀԵՂԻՆԵ . (Ձեռքը դնելով նրա ուսին)

Ես չեմ մոռանա քեզ: (Ծերունին զգացված ու շփոթ) Պարոն Զավենը դեռ չի երևում:

ՆԱՎԱՎԱՐ . (Երկյուղած)

Սխալվել եմ ես . . . վաղվա գնացքի
Տոմս առա նրան:

ՀԵՂԻՆԵ . (Գոհ)

Մի՞թե . . . (Ծիծաղում է սրտանց)
Ուրախ եմ սաստիկ:

ՆԱՎԱՎԱՐ (Հանգիստ)

Ինձ դուր չեն գալիս շատախոս մարդիկ,
Տանել չեմ կարող:
Իսկ դո՞ւ:

ՀԵՂԻՆԵ . (Ժպտում է)

Սիրել կարող եմ լոկ բարի մարդու:

ՆԱՎԱՎԱՐ . (Միամիտ)

Բարձր հասակով:

ՀԵՂԻՆԵ . (Ծիծաղում է)

Հասակով, մտքով՝ միայն թե բարձր
Ինձնից վեր, կարող:
(Լսվում է մոտեցող գնացքի դղրդյունը և սուլոցը, ծերունին սաստիկ անհանգստանում է)

ՀԵՂԻՆԵ . Հանդարտվիր, մոտ չէ:

ՆԱՎԱՎԱՐ .

Հեռու թե մոտիկ պիտի տանի քեզ . . .

ՀԵՂԻՆԵ . (Սիրով)

Իմ բարի ծերուկ:
ՆԱՎԱՎԱՐ .
Երբ որ տեղ հասնես, գրիր իմանամ . . .

ՀԵՂԻՆԵ . (Ցավակցորեն)

Կարդալ չգիտես:
ՆԱՎԱՎԱՐ .

Քեզ ի՞նչ . . . Կկարդամ (Գնացքը կանգ է առնում . Հեղինեն վազում է, ծերուկն էլ հետևից: Քիչ հետո երևում է վագոնի լուսամուտից Հեղինեն, որ ճոճում է իր փոքրիկ թաշկինակը):

ՀԵՂԻՆԵ . (Գնալով) Տե՛ս, չմոռանաս:

ՆԱՎԱՎԱՐ .

(Վազելով) Դու բարով գնաս: (Գնացքը չքանում է, ծերունին երկար մնում է գլխիկոր և ապա թևով դեմքը սրբելով) . Գնաց . . . էլ չի գա . . .